

070.1
7-50

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՆԳՅԱԼԻՇՎԱԿՑԱԿԱՆ
ԺԱՐԺՄԱՆ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵ. Ա. Ն Ա. Ր Կ

Մամուլի հարգածային բժիգազների, Խոկիչ պատերի,
պատի քերթերի խմբկոչների յեզ բանգյուղը դրակից-
ների համար

15795-

070.1
Դ-50

19 JUN 2009

Ար

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՆԳՅԱԼԻՇԼԹԱԿՅԱԿԱՆ
ՃԱՐԺՄԱՆ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1851


ԶԵՌՆԱՐԿ

Մամուլի հարվածային բժիգադների, հսկիչ պուտերի, պատի
քերերի խմբկուների յև բանգյուղը բակիցների համար

15325-52

ՊԵՏՐՈՍՅԱՆ

1931



ՅԵՐԵՎԱՆ

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ծուտով կրեակոյնենք հեգամյակի 4-րդ, յեզրա-
փակման տարին, յերբ ավելի խոշոր խնդիրներ, քան
մինչև այժմ, դրվում են մեր տառ: Խորհրդային Հա-
յաստանի բամբակացան շրջաններում ավարտվում ե
համատարած կողեկտիվացումը և օրու հիմն վրա
կուլակության՝ իրեն դասակարգ, լիկվիդացիան: Խո-
շոր նվաճումներ ունենք սոցիալիստական անամե-
րուժական տնտեսություն ստեղծելու բազավառում,
կոլտնտշարժումը վոչ միայն բանակապես անում ե,
այլև ամրանում են կոլտնտեսությունները, անում են
վորակապես: ՄԵՐ ՅԵՐԿԻՐՆ ԱԳՐԱՐԱՑԻՆ ԻՆԴՈՒՍ-
ՏՐԻԱԼ ՅԵՐԿԻՐՑ ՀԱԳԱՄՑՎԿԻ ԶՈՐՌՈՐԴ, ՅԵԶՐԱ-
ՓԱԿՄԱՆ ՏԱՐՈՒՄ ԴԱՌՆՈՒՄ Ե ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ
ԱԳՐԱՐԱՑԻՆ ՅԵՐԿԻՐ:

Այս բոլորը չի կատարվում իմքնանոս կերպով, տա-
րերայնորեն: Այս բոլորը գլուխ ե զայիս բանվորականն
և կոլտնտեսական մասսաների համար, վթուական պայ-
քարի գնով, բայց և կորեն հաղթանակելով մեր ան-
մուս դժվարությունները, վոչնչացնելով դասակարգա-
յին բշխամու հուսահատ դիմադրությունը:

Կուսակցության գլխավոր գծի համար մզվող այդ
պայքարում, կուսակցության ԳԼԽԱՎՈՐ ԶԵՆՔԸ ՄԱ-
ՄՈՒԼՆ Ե, ՆՐԱ ՇՈՒՐՋԸ ՀԱՄԱԿՄՐՎԱԾ ԲԱԶՄԱՄԻ-
ԼԻՈՆ ՄԱՍՄԱՍԱԿԱՆ ԹՂԹԱԿԻՇՆԵՐԸ:

Պետէցատի ապարան
Դրավիտ 6258 (ը)
Հրամագ. № 1850
Պատվեր № 5241
Տերագ. 6000

Ինչպիս մեր աշխատանքի բոլոր բնագալառներում, նմանապիս և մատուի աշխատանքների ասպարիզում նոր պայմանները պահանջում են աշխատանքի նոր ձևեր: Նոր պայմաններում, բղբակցական շրջանային թերթերի, պատի թերթերի ամրող աշխատանքը վետք և վերակառուցիլի մեր սոցիալիստական արշավի համապատասխան ձևերով և տեմպերով: ՍՏՈՒՆ ՄԱՄՈՒԼԻ ՅԵՎ ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽՈՇՈՐՄԳՈՒՅՑՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՊԵՏՔ Ե ԳԱՌԱՆԱՆ:

Դժրայտարար, մեր տեղական, կուսակցական, խորհրդային, կոմյերիտական, պրոֆեսիոնալ, եւստարական կազմակերպությունների, տնտեսակարների, հիմնարկների գեկավարների վորոշ մասը բավարար չափով չեն հասկացել այն, վոր մամուլը՝ սկսած կենորածական թերթերից մինչև շրջանային և պատի թերթերը՝ պլանների ժամանական և վարակական ցուցանիշների կատարման և գերակատարման հնագամյակը չորս տարամ կենացործելու համար մղվող պայքարի գլխավոր լծուկն ե, իսկ բանգյուղքութակիցներն այդ պայքարի ԱՌԱՋԱՎՈՐ ՅԵՎ ԽԵԶԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ:

Սրանից մի ժամի ամիս առաջ, գործառններում, խորհութեանություններում ու կոլտեսնություններում Համկումկուսի (թ) կենուկոմի, Անդրյերկոմի և Հայկուկուսի (թ) կենուկոմի, բղբակցական շարժման վերակառուցման մասին կայացրած վորոշումների մասայականացման համար անցկացված կամպանիաների ժամանակ յեղել են այսպիսի բազմաբիկ արտահայտություններ,

քա «ՅԱՅԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻՆ ՅԵՒՆՔ ՀԱ-
ԽԱՎԱՆ, ԶԿԱՐՈՂԱՑԱՆՔ ՊԱՏԻ ՅԵՐԹԵՐԻ ԽԸՄ-
ԽՈԼՆԵՐԻ ՎԵՐՋՆԵՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ»:

Թղթակցական աշխատանքի այդ պայքարամեխառա-
կան արամագրույթում գեղևո շարժմական և գյու-
թյուն ունենալ: Շրջաններ կամ վրանի կուսակցմակեր-
պությունները դեռևս չեն գյուտակորել այդ աշխատանք-
ները, պատի թերթերը գումարում են ամենաշատը ար-
գության մեջ, լրայ և՛ տեսնում առելին 2-3 ամ-
գամ միայն տամերին: Պատի թերթերը չեն դառել պր-
ամանների կանոպանան լծակներ:

ՊԵՏՔԻ ԽՓԵԼ ԱՅԴ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:
Միանգում ընդմիշտ պիտի և հոգածանը, վոր մամուլը
և բանգյուղք-դրակցական շարժումը վճռական նշանա-
կություն ունեն հնգամյակի եամոր մղվող սրայքարը
հաշոգության համար:

ԱԱԿ. Ա. Շերտրայամի այս բրոյարը խոշոր ոգմա-
րյուն կարող է ցույց տալ մամուլի կազմակերպիչներ-
ին, բրիգանձերին, հսկիչ պոստերին, պատի թերթե-
րի խմբկանձերին և իրենց՝ բանգյուղք-դրակցմերին,
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ
ԿԻՐԱՌԵՆԱՌԻ ՀԱՄԱՐ: Անհրաժեշտ ե, վոր այս բրո-
յարը լրայն կերպով մասսայականացվի, համեմ վոչ մի-
այն միջին բանգյուղք-դրակցմերը, այլև ՄԻՆՉԵՎ
ՅՈՒՐԱՑՆԵՐՈՒՄ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐ ՈՒ ԿՈԼ-
ՃՆԵՑԵՍՆԱՅՆ և նպաստի իրականացնելու «ամեն մի
հարվածային» բղբակից, ամեն մի բղբակից՝ հարվա-
ծային» լրգումգը:

ԲԱՆԳՅՈՒՂԹԼԹԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ

Առհերդային Միության բանվոր դասակարգը, խորհութանոտեսական, կոլտնտեսական, չքավոր ու սիջակ դյուռ զացիական մասսաները բայլշերկյան կուսակցության զնկավարությամբ, հաջող կերպով կատարեցին ու գեղակատարեցին հնդամյակի առաջին յնրկու տարիների վիթխարի պլանները: Հսկայական չափով աճեց ու զարգացվ մեր սոցիալիստական արդյունաբերությունը և գյուղի կոլեկտիվացումը: Այդ մասին ամեն մի զիտառ կից բանվոր, կոլտնտեսական, առավել ևս բանթվարկից և դյությութակից շատ լավ զիտեն, վորի համար պայքարել և, ինչպես իր առողջա աշխատանքների ընթացքում, զորդարանում, կոլեկտիվում, խորհունաեսության մեջ և այլն, նույնպես և բայլշերկյան մամուլի միջոցվ:

Այժմ մենք վճռականորեն կատարում են դերակատարում և հնդամյակի յերրորդ վճռական տարվա պըսանները, վորը կապահովի հնդամյակի իրազործումը և տարում: Այդ իսկ տեսակետից, ինչպես վորվ բանվառակարգի և կոլտնտեսական մասսայի, նույնուհան մեր կենարանական և սպորտի մամուլի շուրջը

համարված տառնյան գաղտրավոր բանդյուռթղթակիցների առաջ մարտական խնդիր և դրվում՝ աշխատել նոր ձևերով, վերակառուցել բանդյուռթղթակցական շարումն այնպես, վոր նա համապատասխանի վերակառուցման շրջանի պահանջներին:

«Նախարարն սոցիալիստական հարձակման այժմյան շրջանը դիմում է բանգյուռթղթակիցների առաջ նոր, ավելի բարդ խնդիրներ: Յերե բանգյուռթղթակցային շարժման գարգարման առաջին շրջանում բանգյուռթղթակիցների գլխավոր խնդիրը համագումար մեխանիզմի մասը՝ «բերությունների» մերկացման ու դրսերման, ապա ներկա շրջանում բանգյուռթղթակիցները պետք է շատ, ավելի խորը բափանցեն սոցիալիստական շինուարության բոլոր կարևորագույն հարցերի մեջ»:

Այսպես ե առված Համկոմկուսի (բ) կենտկոմի 1931 թ. ապրիլի 16-ի վորոշման մեջ:

Յերներով կուսակցության վերոհիշյալ ոիրեկտիր վեց, մեր կենտրոնական և ստորին մամուլը, ինչպես նաև կուսակցական կազմակերպություններն ու բանդյուռթղթակիցները պետք ե վճռականորեն ձեռնարկեն բանդյուռթղթակցական շարժման վերակառուցման գործին:

ԱՆՀԱՏԱԿԱՆԻՑ ԴԵՊԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Համկոմկուսի (բ) կենտկոմի որդան «Պրավդա» թերթի ունեցած փորձը միանդամայն պարզ կերպով ցույց տվեց, վոր բանդյուռթղթակցական աշխատանքի վերակառուցման հիմնական ձեր, ՄԱՄՈՒԼԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ կազմակերպումն ե: «Մամուլի այդ ուժությանը հանդիսանում են բանգյուռթղթակիցների

կոլեկտիվ աշխատանքի որինակը»: (Համկոմկութիւնների վրոշումից):

Չատ պարզ է, վոր անհատ թղթակցը չի կարող այնքան խորը թափանցել սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառները, չի կարող շավմակողմանի ռուսականիցների իր առաջ գրած հարցերը և բայց շեիւյան յեզրակացությունները ու առաջարկություններ անել այս կամ այն հարցի շուրջը, քան թղթակցական բրիգադը Աերջապես նու զուրկ և մասսայական հետազոտություններ կատարելու հարավարությունից, վորը մեր գործարաններում, հանքերում, խորհուտակություններում, կոլտնտեսություններում և սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում՝ մասսայական հոկողություն ստեղծելու հիմնական միջոցներից մեկն և հանդիսանում: Այդ խնկ տեսակետից ել պետք և անհատական անցնել կոլեկտիվ աշխատանքի, բանգյուղերությունիցներից կազմակերպելով մասնուի հարվածային բրիգադներ: Վարպետի ամենի պարզ լինի, թե լնչպիսի խոշոր առավելություններ ունի թղթակցական բրիգադային (կոլեկտիվ) աշխատանքն անհատականից, մենք եքերենք «Պրավդա» թերթի հարվածային բրիգադներից մեկի կատարած աշխատանքի որինակը:

Բրիդագն իր աշխատանքների ընթացքում քննության և առել և մամուլում լուսաբանել հետևյալ խընդիրները:

1) Կուսրվիլը և սրբազնը կուսակցության պլատոր գծի կենսագործման համար:

2) Կոմունիստների և կոմյերիստականների մասնակությունը սոցմրցման և հարվածայնության մեջ:

3) Ներկործաբանային պլանայնությունը և ժամանակաբանությունը (գործարսնից մինչև տրեստ):

4) Սոցարցման ստուգումը (տարեկան արդյունքը):

5) Արտադրական խորհրդակցության աշխատանքը:

6) Բանվորական առաջարկությունների կատարումը:

7) Կուսակցության գիրեկատիվների կատարումը ուսումնացման մասին:

8) Կապը 25 հակարականների հետ:

9) Արտադրության մեջ վիշացումների (բռակ) գեներացմանը բարելիք պայքարը:

10) Գիշերային հերթի աշխատանքը և սպասարկումը:

11) Պայքար հօսունության գեմ:

12) Խավագույն ձեռնարկների կանկուրությունը և ստուգումը:

13) Միանձնյա զեկավարությունը և վարպետի գերին արտադրության մեջ:

14) Փոկ բաշխիչների աշխատանքի ստուգումը:

15) Խորհուրդների վերընտրության նախապատրաստումը:

16) Աշխանացան և գարնանացան կամացանեանների նախադաշտաստումը:

17) Համկոմկութիւն (բ) կենտկոմի սեպտեմբերյան գիմումի կատարման ստուգումը:

18) Պրոֆ. աշխատանքը ձեռնարկության մեջ:

19) Համկոմկութիւն (բ) կենտկոմի և կվշիկ դեկտեմբերյան պլենումի վորոշումների կատարման ստուգումը:

Այսպիսով, բրիդագը հոկայական ոգնությունն և

շույց տվել մեր կուսակցությանը և իշխանությանը,
վերահեշտ խնդիրների լուծման համար:

Այժմ ամեն մի բանթղթակից կամ զյուղթղթառ
կից կարող և համոզիվել, վոր յեթե այլ թղթակիցները
կաղմակերպված չլինելին բրիգադի մեջ, նրանցից և
վոյ մեկը չեր կարող այդքան, այն ել չափազանց կարե-
վոր խնդիրներով զբաղվել: Նշանակում և, այժմ թըղ-
թակցական աշխատանքի հիմնական ձեւ՝ մամուլի հար-
գածային բրիգադն և, կամ ուրիշ խոսքով՝ կոլեկտիվ
թղթակցային աշխատանքը: Սակայն, այդ չի ժիտում,
վոր մենք չենք շարունակում նաև ուշադրություն
դարձնել անհատ թղթակիցների աշխատանքի վրա:

ԽԵԶՊԵՍ ԿԱԶՅԱԿԵՐՊԵԼ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՐՎԱԾՅԱՅԻՆ ԲՐԻԳԱԴ

Բանդյուղթղթակիցներից մամուլի հարգածային
բրիգադներ կազմակերպվում են կենտրոնական և ստո-
ւական մամուլի կողմից: Բրիգադներ կարող են կազմա-
կերպել նաև չենց իրենք՝ բանդյուղթղթակիցները:

Ասենք թե մի գործարանում, ցեխում, խորհրդա-
ցին ու կոլեկտիվ տնտեսության մեջ, կամ մի այլ տեղ,
կամ մի քանի բանդյուղթղթակիցներ, վորոնք աշխա-
տում են իրարից անջատ: Կենտրոնական կամ ստորին
թամուլի (պատի թիրթի) ներկայացուցիչը, կամ թե-
կուղ չենց այդ թղթակիցներից ամենակտիվը, հրա-
ժիրում և այդ թղթակիցների խորհրդակցություն,
պարզաբանում և նրանց բրիգադային—կոլեկտիվ թըղ-
թակցային աշխատանքի նշանակությունն ու ձեվթը,
կողմակերպում և նրանցից բրիգադա: Բնօրում են մե-
նք իշենց զեկութար՝ բրիգադեր, վորից հետո հասու-

մն կոլեկտիվ թղթակցային աշխատանքը: Բոլիգազն ի-
զեկավարի միջոցով սերտորեն կազմում և կենտրո-
նական և ստորին մամուլի խմբագրության հետ, վո-
րից և ստանում և անհրաժեշտ զեկավարություն և
ցուցմունքներ: Յեթե մի վայրում կա միայն մի թրշ-
թակից, այդ գեպօռմ պիտի աշխատել նոր թղթա-
կիցներ ևս ստեղծել, վորայնողի հնարավոր լինի հե-
տագայում բրիգադ կաղմակերպել, իսկ դրա համար,
հենց ինքը՝ թղթակիցն ակտիվ աշխատանք պիտի կա-
տարի իր շրջապատի բանվորների և կոլտնտեսական-
ների մեջ, նրանցից նոր թղթակիցներ առաջ քաշելու
համար:

ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ԶԵՎԱԿԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԴԵՄ

Մեղ մոտ բանդյուղթղթակցական շարժման վերա-
կառուցումը դանվում և գեռ իր նախնական—կազմա-
կերպչական շրջանում: Սակայն այդ կարճ ժամանակ-
վա վորձը ցույց տվեց, վոր կան նաև ձեվական բրի-
գադներ: Մի քանի թղթակիցներ հավաքվում են և
կաղմամբ բրիգադ, սակայն գործնական աշխատանք-
ների ընթացքում նրանցից ամեն մեկը սկսում և դար-
ձյալ անհատորեն աշխատել, անհատորեն թղթակցել:
Յերեմն ել պատահում և, վոր մամուլի վորեն աշխա-
տակից վնաս և դորժարան, քննություն և կառարում,
հոդված և դրում, հմտո իր ստորագրության հետ մի
յերկու թղթակցի ստորագրությունն ել և զնում և դուրս
և զայիս կեղծ բրիգադ: Շատ պարզ և, վոր դա չե-
պակ բրիգադի կոլեկտիվ աշխատանք: այդ ձեվական
բրիգադ և կոչեկտիվ աշխատանքի աղավաղում և նշա-

Նակում : Նման ձեվական բրիգադներ մեզ պետք չեն և Հենց իրենք՝ թղթակիցները պետք են պայքարեն նման քրիդաշներուի դեմ :

Բանգյուղթղթակցական շարժման վերակառուցման ասպարիզում մեր կենտրոնական և ստորին մամուլի կողմից նկատվում է կուսակցության դիրեկտիվների կոպիտ աղավաղում՝ կոլեկտիվ աշխատանքի սկզբունքի հախատում : Ճիշտ են, մեր թերթերի շուրջն ունենք Հայախմբած մի քանի տասնյակ հարգածային բրիգադներ, փորոնք իսկապես կոլեկտիվ աշխատանք են կատարում, սակայն յեղած բրիդագներից մի մասը ճիշտ հիմքերի վրա չեն դրել իրենց աշխատանքը :

Այդ յերեկությունը չափազանց վտանգավոր և բանուցողթղթակցական շարժման վերակառուցման հետագա աճմանն ու կոլեկտիվ ռելիերով զարգացման համար : Դժբախտաբար մեր մամուլն ել դրա դեմ վոչ միայն չի պայքարում, այլ և քաջալերում և այդ մեկ հոգուց կազմված «բրիդագներին» :

Պետք են վճռական պայքար մղել բանգյուղթղթակցական շարժման վերակառուցման այս աղավաղումների դեմ, կիրառելով շարժման մեջ իսկական բրիգային — կոլեկտիվ աշխատանքի սկզբունքը, վոր պահանջում են կուսակցությունը :

ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱԿԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ

Մեր կենտրոնական և ստորին մամուլի շուրջը համախմբած բրիդագները դեռ չեն պատկերացնում իրենց աշխատանքի ձևերն ու բովանդակությունը : Նըրանք մամուլում հանդես են գտնիք վոչ շատ խորը

քափանցիկով ացիտիստական շինարարության բարը կարեղքագույն հարցերի մեջ, համակողմանի կերպով յերելան համելով թերությունները» (Համ. (բ) կ. Կենտկոմի վորոշումից), այլ գրում են իրենց տեսածի և յերբեմն Քլ լամածի մասին :

«Բանգյուղթղթակիցները պետք են աշխատեն առաջ բերել մեծացույն կազմակերպվածություն, կարգապահություն, աշխատանքի վորակի վճռական բարելավում, պետական, տնտեսական, կոռուպքատիվ որպահների բոլոր սպակներում, առաջ բերել պլանային սկզբանը և պլանային կարգապահության դարգացում, լայն աշխատավորական մասսաների ակտիվության և աշխատանքային վերելքի հետագա աճում (սոցմրցություն, հարվածայնություն, հանգիստական արդֆինովան) : Պայքարելով պետական ապարատի թերությունների դեմ, հայտարերելով և խարազանելով կուսակցության դժի բյուրոկրատիկ աղավաղումները և այդու հականարգած տալով դասակարգային թշնամուն : (Համկոմի ուժի (բ) կենտկոմի 1931 թ. ապրիլի 16-ի վորոշումից) :

Այս խնդիրների իրականացման համար պետք է վերացնել բանգյուղթղթակցական շարժման և նրա աշխատանքի վերակառուցման բյուրոկրատիկ ձեմերն ու աղավաղումները :

Բրիդագի աշխատանքի հիմնական ձեվը դա արշավների (օչնը) կազմակերպումն է :

Իմնչպի՞ս պիտի կազմակերպիլ արշավները : Նախպատի թերթի խմբկուր կամ բրիդագի դեկալարը հրավիրում են բրիդագի ժողով, վորտեղ վորոշում են, թէ

Թթշալը վո՞ր գործարանի, խորհրդային, կուշտ տընտեսության, հիմնարկի, ձեռնարկի կամ մի վորեակացի կազմակերպության վրա յէ կազմակերպվելու:

Այդտեղ կազմում են արշավի մանրամասն ծրադեր և այն հարցերի ցուցակը, վորոնց մասին ստուգում պիտի կատարի:

Ելթե բրիգադը կազմված է 10-15 կամ ավելի թղթակիցներից, այդ գեպօւմ պիտի բաժանել առանձին յինթարքիղաղաների: Նբանք իրենց ձեռքում ունենալով առանձին ծրադիր-հարցաթերթ, պիտք է ստուգեն այն հիմնարկության կամ կազմակերպության առանձին ցեխերն ու բաժինները, — վորի վրա արշավում են:

Նախ քան արշավելը, բրիգադում պիտի լսել հրահանդչական գեկուցում, վորպեսզի բրիգադի ամեն մի անդամ լավ պատկերացնի և հասկանա իրեն անելիքները:

Բրիգադի աշխատանքի այդ հրահանդչական մասը ունիտի կազմակերպել այնպիս, վոր ամեն մի հարվածային թղթակից պարզ հասկանա և ըմբռնի, վոր ինքը պայմանում է կրասակցության գլխավոր գծի կիրառման համար, վոր նա ողջում է կրասակցությանը՝ հաջողությամբ ավարտելու սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը:

Այս բոլորից հետո բրիգադը բաժանվում է մի քանի մասերի, վորոնց գեկավարում են բրիգադիրները:

Պիտք է միշտ հիշել, վոր յերբ բրիգադն արշավը կազմակերպում է հենց իր գործարանում, այդ գեպօւմ բրիգադի գեկավար պիտի վերցնել մի ուրիշ գործարանից: Բացի այդ, բրիգադներում անպայմանողեն պի-

տի ունենալ այնպիսի ընկերներ, վորոնք իսկապես լուվծանոթ են արտազրության հարցերի հետ: Նպատակահարմար է արշավների ժամանակ բրիգադի հետ վերցնել նաև մասնագետներ: Այդ դեպքում արշավն ավելի ժեծ արդյունք կտա:

Պիտի աշխատել, վոր բրիգադիրները լինեն քաղաքականապես պատրաստված և գրադես ընկերներ:

Արշավները պիտի կազմակերպել այնպիս, վոր գույքում մի գեպօւմ չանդրադառնա արտադրության վրա: Վոյքում մի գեպօւմ չի կարելի բանթղթակցին կտրել արտադրությունից, արշավ կազմակերպելու համար:

Արշավները պիտի հարմարեցնել գործարանում աշխատանքի հերթափոխության հետ:

Յևնթաղենք, գործարանի առաջին ցեխի՝ առաջին հերթը (ամենան) վերջացրեց իր աշխատանքը և նրան փոխարինեց յերկրորդ հերթը: Ահա հենց այդ ժամանակ ել, առաջին հերթի (ամենային) բանթղթակցները պիտի մասնակցեն արշավին: Նույն ձեզով ել մյուս հերթերի հարվածայինները:

Զափաղանց նպատակահարմար է, վոր արշավները կազմակերպվեն հանդստի որերին:

Այս բոլորից հետո, բրիգադը կազմ ու ուստրասությունում է գործարան, կոլտնտեսություն կամ այն հիմնարկությունն ու ձեռնարկությունը, վորտեղ վորոշած է կազմակերպել արշավը:

Ինչպես սկսել աշխատանքը: Ակդրից ամբողջ բրիգադը ներկայանում է կոմբջիջին, հիմնարկության վարչությանը և պրոֆ կազմակերպության մարմնին:

Բրիգադի գեկավարը ծանոթացնում է հիմնարկության յեռանկյունում՝ բրիգադի դալու նպատակի մա-

ո՞ն և լուսմ են յեռանկյունու ներկայացուցիչների տված
տեղեկությունները : Դրանից հետո , բրիգադի մի մասը
զնում և բանվորների հետ զրուցելու , մի մասը ստու-
դում և ծանոթանում և արտադրական հանձնաժողովի
կամ խորհրդակցության աշխատանքների և մատերիալ-
ների հետ , մի մասն ստուդում և վարպետների աշխա-
տանքը և այլն :

Բանվորների , վարպետների և յեռանկյունու տված
բոլոր ահեղեկություններն ու տված առաջարկություն-
ները բրիգադը գրի յի առնում :

Այդ հետաղոտությունների ընթացքում կարող են
ծագել կամ հանդես դալ բազմաթիվ հետաքրքիր նոր
հարցեր , վորոնք չեն նախատեսնված բրիգադի հարցա-
ցուցակի մեջ : Այդպիսի հարցերը ևս հաշվի պիտի առռ
նել , վորովհետեւ նման հարցերը կարող են բրիգադին
չեծ ոգուստ տալ :

Բրիգադը չպիտի ասվարշարվի միայն արշաված
գործարանից կամ կուտանսությունից բերված նյուու-
թերով : Նա տեղեկություններ և մատերիալներ պիտի
համարքի նաև այն բոլոր հիմնարկություններից ու կաղ-
աքիերպություններից , վորոնք կապված են տվյալ հիմ-
նարկության (այսինքն արշաված) հետ : Այդպիսով
բրիգադի ձեռքի տակ ամելի հարուստ նյութեր կլինեն :

ԽօնջՊԵՍ ՎԵՐՍՄՇԱԿԵԼ ՅԵՎ ԶԵՎԱԿԵՐՊԵԼ ԱՐՇԱՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Կաղմակերպված արշավաներից հավաքված նյութերի
վերամշակումն ու ձեփակերպումը բրիգադի ամենակա-
րեվոր խնդիրներից մեկն և հանդիսանում :

Այսուղ և , վոր բրիգադը պիտի կարողանա բարձ-

րացնել իր աշխատանքի վորակն ու բավանդակությունը ,
հարուստ և բանջարժեցնությունը ճառակարգել մեր մա-
տուցման :

Բրիգադի իր նիստում լուսմ և բրիգադի բնա-
գործականները , վորի հիման վրա մնում և առաջար-
կություններ ու յեղակացություններ : Նյութերի վի-
րամշակումը չափարանց պատասխանառու դործ և և
դրա համար ամեն մի առաջարկություն և բառ անդամ ,
պիտի ժննել հաստիկ լրջությամբ :

Սրաւ կլինի , յեթե նյութերի վերամշակման ժա-
մանակ բրիգադը կամ նյա մի վորեւ անդամն իրեն նը-
պատակ զնի միայն թերությունները հայտաբերել և
մերժացնել : Հարվածային թվականիցը պիտի կարողանա
հանդիս ընթել և ցուցաբերել նաև սոցիալիստական շի-
նորարության նվաճումներն ու հաջողությունները , նա-
ովիսի ցույց տա աշխատանքին կոմունիստական վերա-
բերմունք ցույց տալու կոնկրետ որինակներ և այլն :

Մեր բրիգադների թերթերին ուղարկած նյութերը
Համայն կը ունի նև ընդհանուր բնույթ , վոչ մի դեպքում
չի կարելի ընդհանուր խոսքերով ասել , վոր «Պործա-
րանում կա ճեղքվածք» կամ «կոլտնտեսությունում աշ-
խատանքը լավ չի կաղմակերպված» : Այսպիսի ընդհա-
նուր խոսքերը վոչ մի ոգուստ չեն տա մեզ , հնարավո-
րություն չենք ունենա բործարանում կամ կոլտնտե-
սության մեջ հայտնարերած բացերը վերացնել : Վո-
րովհետեւ ընդհանուր խոսքերից չի կարելի ճիշտ և
կոնկրետ յեղակացություններ հանել : Պետք ե գրել
կոնկրետ որինակներով ու փաստերով : Յեթե բրիգադը
կանկրետ որինակներով կամ հարվածային թվականիցը
կամ հարվածային թվականիցը գրում և գործարանի
արդիքին պատճենի կամ կոլտնտեսության արտադրական

պլանի մասին, ապա կոնկրետ կերպով պիտի առել՝ թե
պլանը քանի՞ տոկոսով և կատարված, վորոնք են պլա-
նի թերակատարման պատճառները (զեկավարության
թուլություն, հումուշի պակասություն, պրոգուլ-
ննը, բանուժի հոսունություն, թափթփածություն և
այլ պատճառներ):

Այս բոլորը հաշվի առնելով՝ բրիգադը վերամշա-
կում է իր նյութերը, վորից հետո հաստատում բրի-
գադի ժողովում և ուղարկում թերթի խմբադրության:

ԿՈՆԿՐԵՏ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Թույլ ե աշխատանքն այն բրիգադում, վորը դրաշ-
ղում և միայն հետազոտություններ կատարելով և մա-
տուլին դրելով: Մամուլի հարվածային բրիգադն իր կո-
չումը պիտի արդարացնի վոչ միայն դրելով, այլ և տե-
ղում, գործարանում, խորհրդային ու կոլեկտիվ անտե-
սության մեջ նա կոնկրետ ճեռարկումներ պիտի կա-
տարի, յեղած ճեղքվածքը վերացնելու համար:

Եւրը բրիգադի նյութերը տապագրվում են մամու-
լում, բրիգադը յերբեք չպիտի դրանով հանգստանա և
եր աշխատանքը վերջացած համարի: ընդհակառակը,
դրանից հետո նա պիտի պայքարի ճեղքվածքները վե-
րացնելու համար, մի խոսքով իր սկսած աշխատանքը
հետեւղականորեն մինչև վերջ պիտի հասցնի: Պետք է
հրավիրել ցեխերի ժողովներ, լսել ցեխի ավագների և
բրիգադիների զեկուցումները, անհրաժեշտ գեղքում
դումարել արտադրական խորհրդակցություն և այլն:

Մի խոսքով բրիգադը պիտի ճեռք առնի ըսլոր մի-

ջոցները, վորոգեսպի տեղում ևս այլ ճեղքվածքների գո-
րացման համար անհրաժեշտ աշխատանքը կատարվի:

Այդ գեղքում բրիգադի աշխատանքը թե՛ մամուլը
և թե՛ բանվորական ու կոլտնտեսական մասեաները
բարձր կղնահատեն:

ՑՈՒՅՑ ՏԱԼ ԿՈՆԿՐԵՏ ՑԵՎ ՈՊԵՐԱՏԻՎ ՃԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր մամուլի դեկավարությունը բանդյուղթղթա-
նկցների աշխատանքների նկատմամբ վոչ միայն անրա-
մատար և, այլև այդ դեկավարության ձեվերն ու մե-
թադները չեն համապատասխանում բանդյուղթղթակցա-
կան շարժման վերակառուցման ներկա պահանջներին:

Այժմ, ել չի կարելի բավարարվել միայն նամակա-
գրությունների միջոցով բանդյուղթղթակցների հետ
կապ պահպանելով: Այդ նամակագրություններն այժմ
մեծ մասամբ լինում են այն դեպքում, յերբ թղթակիցը
հարցնում ե իր ուղարկած թղթակցությունը տպվե-
լու կամ չտպելու մասին. հաճախ թղթակիցներից մեծ
մասի հետ այդ դրավոր կապն ել չի պահպանվում:

Եւրեկմն մեր մամուլի աշխատակիցները դժգոհում
են, վոր թղթակիցները կամ բրիգադները հարուստ և
վորակյալ մատերիալ չեն մատակարարում մամուլին,
քաղաքական-ունտեսական կամպանիաների առթիվ տե-
ղերում կատարվող աշխատանքները լով չի լուսաբան-
վում մամուլում և այլն:

Այդ հանդամանքը մասամբ ճիշտ և օակայն ի՞նչն
ե դրա պատճառը: Դրա հիմնական պատճառը հենց մա-
տուլի վոչ բավարար և անվորակ դեկավարությունն ե:
Մինչ շատ ենք խոսում բանդյուղթղթակցական շարժ-

ժամն վերակառուցման ժամին, սահայն քիչ և թուզուժ
և շատ քիչ դործ և կատարվում այլ շարժման ղեկա-
վարության ձևերի ու մեթոդների վերակառուցման
ոպերատիվ ղեկավարություն ստեղծելու մասին:

Ինչպիս վերակառուցել ղեկավարության ձևերն
ու մեթոդները:

Կենարոնական թերթերի խմբագրությունների կի-
սառ պոտա մասսայական բաժիններն՝ այլևս հնարավո-
րություն չունեն կարգավորելու բրիգադների և բան-
դյուզթղթակիցների կազմը, պահել նրանց հաշվառու-
թը, ժամանակին տալ նրանց առաջադրած հարցերին
անհրաժեշտ պատասխան, կատարել նրանց աշխատանք-
ների հաշվառում և մի խորքով ստեղծել ոպերատիվ և
կոնկրետ ղեկավարություն: Այդ պահանջով ել Հ. Կ.
(թ) Կենարութիւնագործողթղթակցական շարժման վերա-
կառուցման մասին ընդունված վրոշումների մեջ պարզ
ասված և «Հարվածային բրիգադների և բանդյուզթղթ-
թակիցների նկատմամբ ուղերատիվ ղեկավարություն
չույց առլու նպատակով», բոլոր թերթերին կից ստեղ-
ծել բրիգադների հարվածային բրիգադների սեկոր-
ները:

Այդ սեկորները պիտի կապվեն ըրջկուսկոմների,
դործարանների, խորհրդային ու կոլեկտիվ տնտեսու-
թյունների մամուլի և բանդյուզթղթակիցների կազմա-
կերպիչների հետ և նրանց միջոցով պիտի ղեկավարեն
մամուլի հարվածային բրիգադներին և բանդյուզթղթ-
թակիցներին:

Իհարկե, սխալ կլինի, յեթե հարվածային բրիգադ-
ների սեկորները միայն այդ կազմակերպիչների միջո-
ցով իրենց ղեկավարությունը տարածեն բրիգադների և

բանդյուզթղթակիցների պրա: Դա շափառանց քիչ և:
Նրանք անմիջականորեն պիտի կապվեն նաև հարվածա-
ռությունների հետ: Կոնկրետ և կենդանի ղեկավա-
րություն ցույց տան նրանց կազմակերպված արշավնե-
րին և այլն:

ԱՍՏՎԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կենարունական և չըջանացին մամուլի հարվածային
բրիգադների սեկորները գործարաններում, խորհրդա-
յին ու կոլեկտիվ տնտեսություններում, Հանքերում,
մեքենատարակտորային կայաններում և այլ վայրերում
ունենում են իրենց բանդյուզթղթակիցների կազմակեր-
պիչները: Յեթե գործարանը կամ կոլտնտեսությունը
խոչը և, այդ պես պատճեն կարելի յի ունենալ նաև ցեխա-
յին կազմակերպիչներ:

Կազմակերպիչները պիտի լինեն մամուլի խնդիրնե-
րին ծանոք, բարեկանապես պատրաստված ակտիվ
բանդյուզթղթակիցներ:

Կազմակերպիչը սերտորեն կապված պիտի լինի
դործարանի կամ կոլտնտեսության կուսակցական ու
պրոֆեսիոնալ կազմակերպությունների և կենարունական
մամուլի հետ: Նա պիտի աշխատի կուսակցական կազ-
մակերպության ղեկավարությամբ և ամեն կերպ պիտի
ոգնի տնտեսավարին՝ դործարանի կամ կոլտնտեսության
աշխատանքները լավ կազմակերպելու, արդիքինպահ-
ները կատարելու և ղեկավարելու համար: Կազմա-
կերպիչը պիտի լավ հաշվի առնի և նախապատրաստի
հարվածային բանգյուղը դրակիցներին՝ կուսակցու-
թյան մեջ անցկացնելու համար:

Կուտապղության դիրքեկտիվն եւ քամեն մի բդրակից հարվածային, ամեն մի հարվածային բդրակից»։ Այդ լրդունդն իրականացնելու համար, կազմակերպիչը լայնորեն պիտի մասսայականացնի հարվածայնության նըշանակությունն ու գաղափարը, կատելով այն արդֆինալանների կատարման և ընդհանրապէս գործարանի կամ կոլտնտեսության առորյա աշխատանքների հետ։

Կազմակերպիչը լավ պիտի լմանա, թե գործարանում, կոլտնտեսության մեջ և նրանց առանձին ցեխերում քանի՞ Հարվածային թղթակից կա, արդարացնո՞ւմ են նրանք իրենց կոչումը, ովքե՞ր են բրիգադի արշավներին կամ մամուլին ակտիվ մասնակցում։ Նա պիտի հսկի, վոր սիմուլյանտները, պոկողները, կեղծհարվածայինները և անհարազատ տարրերը մացկենքանդյուղթակիցների շարքերը։

Կազմակերպչի ամենահիմնական խնդիրներից մեկն ե՞ բանվորական նորանոր մասսաներ ներգրավիլ բանգյուղը նդարակցական շարժման մեջ, իսկ դրա համար նա պետք ե ծանոթացնի ինչպես թղթակիցներին, նույնպես և բանվորներին ու կոլտնտեսականներին մեր մամուլի նշանակության և նրա առաջ դրված խնդիրների, նրա ռողբրատիվ— մասսայական աշխատանքների հետ։

Գործարանի կամ կոլտնտեսության կյանքից վերցրած կոնկրետ որինակների և փաստերի հիման վրա, նա պիտի ցույց տա, վոր—

«ՄԱՄՈՒԼ ԱՅՆ ՄԻԱԿ ԶԵՆՔՆ Ե, ՎՈՐԻ ՈԴՆՈՒԹՅԱՄԲ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԵՆ ՈՐ, ԱՄԵՆ ԺԱՄ ԽՈՍՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԵՏ, ՆՐԱՆ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎԱՎ» (Ստալին)։

Կազմակերպիչը պետք ե հավաքի ու հաշվի առնի

հարվածայինների ցանկությունները, կարծիքներն ու առաջարկությունները գործարանի կամ կոլտնտեսության աշխատանքների մասին և տեղեկություն առաջանային կամ կենտրոնական ժամուլին։

Կազմակերպիչը պետք ե առնի նախապատրաստական աշխատանք՝ արշավների կազմակերպման համար, սակայն նա վոչ մի դեպքում չպիտի իր վրա վերցնի արշավի կազմակերպման տեխնիկական աշխատանքները (այդ պիտի կատարեն բրիգադները և բրիգադիրները), կազմակերպիչը պիտի բացարի հարվածայիններին արշավի քաղաքական-տնտեսական նշանակությունը և առմեն մի հարվածայինի դերն ու անելիքն արշավի ընթացքում։

Կազմակերպիչը պետք ե ուսումնասիրի ընթերցողներին, պարզի, թե նրանք ի՞նչ հարցերով են հետաքրքրվում, ինչպես են յուրացնում մամուլի արծարծածելուաբանած հարցերը, պիտի սղնի նրանց մամուլի տուշաղրած այս կամ այն խնդիրը լավ հսկանալու և կյանքում իրադրութելու համար։ Նա հաճախակի պիտի գումարի ընթերցողների կոնֆերանսներ, իսկ մամուլի շուրջը նոր ընթերցողներ գրավելու համար, պետք ե հրավիրի նաև վոչ ընթերցող բանվորների և կոլտնտեսականների ժողովներ ու կոնֆերանսներ։

Կազմակերպչի պարտականությունն ե ամսական 1-2 անգամ հրավիրել, գործարանի կամ կոլտնտեսության հարվածային թղթակիցների հավաքներ և զեկուցում առ նրանց հերթական անելիքների մասին։

ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆՐԻ ՀԱԳԱՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԽԵԴԻՐՆԵՐԸ

Մի քանի արշավներ կաղմակերպելուց հետո, կադակներպէջների ղեկավարությամբ պետք և հրավիրել ժամուլի և հարվածային բրիգադների հավաքներ :

Այս հավաքները չափազանց մեծ նշանակություն ունեն բանշյուռվթղթակցական շարժման վերակառուցման, նրա հետազա աճման ու զարգացման համար :

Հարվածային բրիգադների հավաքները պիտի հետապնդեն գլխավրապես հետեւյալ նպատակները՝

1. Ինչպիսի՞ դրական և բացասական կողմեր են ունեցել կաղմակերպված արշավները :

2. Ինչպիսի՞ հանդամանքներ են խանդարել կամ արդելք հանդիսացել արշավների հաջող անցկացմանը :

3. Ինչպի՞ս են ղեկավարել կուսակցական ու պրոֆեսիոնալ կաղմակերպությունները մամուլի հարվածային բրիգադների՝ աշխատանքները :

4. Ինչպիսի՞ գործնական արդյունքներ են առվել արշավները և ի՞նչ պիտի անել արշավները հետաշայում ավելի հաջող անցկացնելու համար :

5. Կատարել աշխատանքի դրական փորձի փոխանակում տարբեր բրիգադների միջև :

Հավաքները կարելի յե հրավիրել համարազաքանին, ըջանային, գործարանի կամ կոլտնտեսության ժամանակով :

Զավաքներ կարելի յե հրավիրել համարազաքանի գործարանների կամ կոլտնտեսությունների հարվածային բրիգադների միացյալ հավաքներ, փորոշեառ այդպիսի հավաքները հնարավորություն կտան

բաղմակողմանի կերպով ուսումնասիրել, յերևական հանել աշխատանքի ղրական, լավագույն փորձը և մասսայականացնել այն :

Վորապեսզի հավաքները հաջող անցնեն և չոշափելի արգյունք տան, պետք ե լայն նախապատրաստական աշխատանք կատարել: Գործարանների կամ կոլտնտեսությունների պատուի թերթերը պետք ե լայնորեն լուսաբանեն մամուլի հարվածային բրիգադների աշխատանքները, հավաքների առաջ դրված խնդիրները, պրոպագանդայի պիտի մղեն հարվածայինության ծավալման համար և նախապատրաստեն հարվածայիններին կազմու պատրաստ գիմավորելու հավաքին:

Փորձը ցույց ե տվել, վոր հաճախ մեր հարվածայինների հավաքները տօնական բնույթ են ստանում և ուրախ բացականչություններով, գորգուոցներով, յերշեմն ել ձեւական խոստումներով վերջանում են հավաքները:

Նման յերեվոյթներից պիտի խուսափել: Հավաքները պետք է անց կացնել ինքնաքննադատության կրակի տակ և նրա գլխավոր ուշադրությունը բեկոնել բացերի վրա: Այդ գետքում մենք հետադառնում ավելի ժեժ հաջողություններ ձեռք կբերենք:

Հավաքներում հիմնականում պիտի դնել յերկու հարց, վորից մեկը պիտի լինի բրիգադներին հետաքըրքը ըրրազ և նրանց առորյա աշխատանքների հետ կապված քաղաքական գեկուցում, իսկ մյուսը՝ մամուլի հարվածային բրիգադների կատարած աշխատանքի արդյունքները և նրանց հերթական խնդիրները, նպատակահարմարմար և հավաքներում լսել նաև մի քանի որինակեմ բրիգադների գեկուցումները:

Հավաքների ընդունած վորոշումները պիտի լինեն
կոնկրետ և գործնական, վորպեսզի հետագայում բրե-
դադները կարողանան զբանով ղեկավարվել:

ՀՍԿԻՉ ՊՈՍՏԵՐԸ

Բանդյուղթղթակցական շարժման վերակառուցման
հիմնական ձևերից մեկն ել ներկա ըրջանում, դա մա-
մուլի հսկիչ պրատն է: Հսկիչ պրատը հարվածային բրե-
դադից տարբերվում են նրանով, վոր նա արշավներ չե-
կազմակերպում զանազան վայրերը բացի այդ, նա աշ-
խատում ե ամեն որ և ամեն ժամ: Հսկիչ պրատի պար-
տականությունն ե իր առորյա աշխատանքների ընթաց-
քում միշտ հետեւել և հսկել գործարանի կամ կոլտնուե-
սության աշխատանքներին, այն իմաստով, վոր յուրա-
քանչյուր թերություն կամ խոչնդու նկատելիս, ահա-
զանդել մամուլին և միաժամանակ տեղում անհրաժեշտ
միջոցների զիմել այդ բացը վերացնելու համար: Նշա-
նակում ե, վոր հսկիչ պրատը գործարանում կամ կոլ-
տընտեսությունում հանդիսանում ե հասարակական
հսկողության (կոնտրոլի) մի ձև, վորի միջոցով մեր
ժամուլը իր ամենորյա հսկողությունն ե հաստատում
ուղիւալստական շինարարության բոլոր ասպարիլնե-
րում կատարլող աշխատանքների վրա:

Հսկիչ պրատը նույնպես հանդիսանում ե բանդյուղ-
թղթակցական կոլեկտիվ աշխատանքի մի ձևը: Նշանա-
կում ե՝ հսկիչ պրատը կազմակերպվում ե մի քանի (վոչ
պակաս յերեք) հարվածային թղթակիցներից, սակայն
մեր կենտրոնական և ըրջանային մամուլի նշերում շատ
հաճախ մենք նկատում ենք, վոր հսկիչ պրատերի անվան
քակ հանդեմ են գալիս անհատ թղթակիցները: Այդ

հանդամանքը վտանգավոր ե բանդյուղթղթակցական
շարժման վերակառուցման և Հենց մեր մամուլի աշխա-
տանքների հետազա հաջողության տեսակետից: Պետք
ե անհապաղ վերջ դնել հսկիչ պրատերի իմաստն ու նշա-
նակությունն աղավաղելու այս յերեվույթին, դարձ-
նելով նրանց բանդյուղթղթակցական իսկական կոլեկ-
տիվ աշխատանքի ողակներ:

Ի՞՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԸ

Պիտի արձանագրել, վոր մեր կենտրոնական և ստո-
րին մամուլը շատ քիչ կարևորություն ե տալիս մամու-
լի հարվածային բրիդադների, հսկիչ պրատերի և ընդ-
հանրապետ բանդյուղթղթակիցների հաշվառման գոր-
ծին: Հաշվի չի առնվում վոչ միայն նրանց քանակը,
այլև կատարած աշխատանքը:

Անկատկած, վոր այդ հանդամանքը բացառական
մեծ աղդեցություն ե թողնում բանդյուղթղթակցական
շարժման աճման ու ծավալման վրա:

Բանդյուղթղթակիցների և նրանց կատարած աշխա-
տանքի ճիշտ հաշվառումը հնարավորություն կտա մեզ
կարդագրել նրանց սոցիալական կաղմը, թույլ չտալ,
վոր նրանց շարքերում խորթ ու ոտար տարբեր խցկվեն,
իմանալ, թե քանի՞սն են գրանցից հարվածային, ինչ-
պի՞սի հասարակական աշխատանք են կատարում նրանք
տեղերում, ինչպես ե ընթանում շարժման աճումը և
այլն:

Հաշվառման դործի ճիշտ կաղմակերպումը մեղ հը-
նարավորություն կտա նաև հետեւել բանդյուղթղթա-

կիցների թղթակցությանների և նրանց առաջադրած հարցերի կատարմանը:

Մի խոսքով, թե՛ կենտրոնական, թե՛ չըջանալին առն մի թերթ պիտի լավ ճանաչի իր ամեն մի թղթակցին. իսկ դրա համար պետք է լավ հիմքերի վրա դնել հաշվառման գործը:

Ինչպես պետք է կազմակերպել հաշվառումը: Դրա համար անհրաժեշտ է սպասագործել «Պրավդա» թերթի որինակը:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԹՂԹԱԿՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Անուն, ազգանուն և հայրանուն
2. Տարիքը
3. Աշխատանքի վայրը
4. Սոց. դրությունը
5. Մասնագիտությունը
6. Կուսակցականությունը
7. Հասարակական աշխատանքը
8. Հասցեն
9. Վոր բրիգադում կամ պոստումն և աշխատում

Հաշառման այս ձևով հնարավորություն կտա յուրաքանչյուր կենտրոնական կամ ըլջանային թերթի՝ ճանաչել իր թղթակցին, համապատասխան ցուցմունքներ և առաջադրություններ տալ նրան և մշտական կազ հասանալ նրա հետ: Հաճախ մեր թերթերի խմբագրությունները հրահանդաներ են ուղարկում թղթակցներին, առանց հաշվի առնելու, ին այդ հրահանդում առաջդրված հարցերը վերաբերվում են թղթակցին, թե

գոչ: Արինակ, ճրահանդը լինում է բամբակի մշակման կամպանիայի մասին, առաջ նույն հրահանդն ուղարկվում է և բամբանաշղթական և անասնաբուժական շղանների թղթակցներին: Չատ պարզ է, վոր անասնա բուժական շղանների թղթակցներն այդ հրահանդից վոչ մի ողուած չեն կարող ծառանալ, քանի վոր իրենց մոտ բամբակ չկա և զա նույնիսկ կարող է վորոշ պիտուրուն առաջ բերել:

Ուրիշիցայ ձեր հաշվառումը հնարավորություն կտա խմբագրություններին՝ պարզել, թե ի՞նչ հարցերով կամ աշխատանքով և զբաղվում ամեն մի թղթակից, վորից հետո հետո կինի նրանց ավելի կոնկրետ ցուցմունքներ են և զեկավարություն ցույց տալ:

Նման ձեր հաշվառումը կարելի յի կիրառել նաև հարվածային բրիգադների և հոկիչ պոստերի նկատմամբ:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարվածային բրիգադների կատարած աշխատանքի համարական համար

Հարվածային բրիգադի աշխատանքի վայրը

Բ Ր Ի Շ Ա Ր Ի	Հ Ա Ր Ա Ր Ա Ր Ի	Գ Ո Ւ Ա Ր Ա Ր Ի	Բ Ր Ի Վ Ա Ր Ա Ր Ի	Ա Ր Ա Ր Ա Ր Ի
Անդամների անուն և ազգանունները	Հարվածային բրիգադի անուն և ազգանունները			

Շատ լավ կլինի, բրիգադների և հոկիչ պոստերի
համար ունենալ առանձին հաշվառում, վորովհետեւ գա
հարագվորություն կտա բրիկադների և հոկիչ պոստերի
ուշադրությունը հարկ յեղած ժամանակին բեվեռել ցան-
կացած ինդրի վրա :

Ամեն մի արշավից հետո, բրիգադը պիտի լրացնի
այս հարցաթերթը և ուղարկի այն թերթի խմբագրու-
թյան, վորի հետ կապված ենա :

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՄԵՐ ՊԼԱՆՆԵՐԻ ԿՍՏՐՄԱՆ ԼԱՎԱԴՈՒՅՑՆ ԼԾԱԿՆԵՐ

Պատի թերթերի գերը մեր պլանների կատարման ու
գերակատարման ասպարիզում չափաղանց մեծ եւ :

Բազմաթիվ գործարաններում, կոլտնտեսություննե-
րում և այլ վայրերում պատի թերթերը բայլչելիյան
աշխատանք են ծավալել՝ մեր պյանների կատարման ու
գերակատարման համար : Սակայն չիմնականում մենք
գեռ չենք կարողացել այդ թերթերի աշխատանքը վերա-
կառուցել և ողատշած բարձրության վրա դնել :

Մեր գործարաններում և կոլտնտեսություններում
պատի թերթերի մեծ մասը միայն անունով գոյություն
ունեն : Գերջերս կաղմակերպված ստուգատեսը պար-
զեց, վոր Յերեվանի գործարանների, Ղամարլի, Վա-
զարշապատի, Ապարանի և այլ շրջանների պատի թեր-
թերի մեծ մասը տարեկան 4-5 անգամ, տոներին են լույս
տեսել և չափաղանց քիչ են զբաղվել արտադրական-արձ-
տիսական հարցերով :

Անվերապահորեն պիտի չեշտել, վոր չնայած կու-
տակության բազմից վորոշումներին, այնուամենայնիվ
տեղական կաղմակերպությունները չարունակում են

թերագնահատել և ողորտունիստական վերաբերմունք
ցուցաբերել հանդեպ ստորին մամուլի աշխատանքները :

«Անբավարար ու անվան և կենտրոնական մամուլի
կենդանի, բանավոր, ովերատիլ դեկավարությունն ըս-
տորին մամուլի վրա, հատկապես գործարանային, կոլ-
տրնտեսական, զյուղական պատի լրազբերի վրա» :

(Հ4 (բ) ԿԿ-ի վորոշումներից) :

Այլ բոլորի հետեւանքով, մեր պատի թերթերը դեռ
չեն կարողացել իրենց առաջ դրված ինդիքները լիովին
ընդգրկել, չեն կարողացել աշխատավոր մասսաների
կԱԶՄԱԿԵՐՊԻՉՔ դառնալ, նրանց համախմբել մեր վիթ-
խարի ողանների կատարման ու գերակատարման շուրջը :

Համկոմկուսի (բայլչելինների) կենտրոնական կո-
միտեն իր ս. թ. ապրիլի 16-ի վորոշման մեջ արձանա-
գրել է, վոր պատի թերթերը գործարաններում, հանքե-
րում, գնացքներում, խորհունեսություններում, կոլ-
տրնտեսություններում, մեքենատրակտորային կայան-
ներում և այլ վայրերում, ներկայումս քրացառիկ նշա-
նակություն են ստանում» :

Կուռակցության այդ մարտական դիրեկտիվից յել-
նելով՝ կուսակցական կազմակերպությունները և կենտ-
րոնական ու շրջանային թերթերը, խմբադրությունները
վճռաբար պիտի նախաձեռնեն ստորին մամուլի վերա-
կտուցումը, գարձնելով նրանց մեր արտադրական, տըն-
տեսական, պանակերի կատարման ու գերակատարման
բայլաշույն լծուկնեց :

ԽՄԲԿՈՒԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԵՎԸ

Եխնչեա այժմ պատի թերթի խմբիով ընտրվում եր
բղբակիցների և պնդելուսպների ժաղացում, ոսկայն

փորձը շույց տվեց, վոր ընտրություն այդ ձեվը հետաքրորություն չեր տալիս բանվորական և կոլտնաեռական լայն մասսաներին պատի թերթի շուրջը համախմբել: Բազմաթիվ գործարաններում և կոլտնաեռություններում թերթերը լույս եցին տեսնում մի քանի հոդու մասնակցությամբ և հնարավորություն չեր լինում գործարանում կամ կոլտնաեռությունում յեղած բոլոր բացերը և դրական աշխատանքները լուսարանել: Վերջապես պարզ և այն, վոր յեթե թերթի շուրջը չկա համախմբած ժամաս, ապա այդ թերթը չի կարող հաջողություններ ունենալ:

Այս հիմնական բացը վերացնելու համար, պիտի և խմբկուների ընտրությունները կատարել գործարանի կամ կոլտնաեռության բանվորների և կոլտնաեռականների ընդհանուր ժողովում:

Խմբելի վերջնորության այս ձեվը հնարավորություն կտա շարժել ամբողջ բանվորների և կոլտնաեռականների հետաքրքրությունը զեղի պատի թերթը, հետեւ պատի մասնութից անել նրա աշխատանքներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԽՄԲԿՈԼԻ ՆԵՐՍՈՒՄ

Պատի թերթերի աշխատանքների հաջողությունը կախված է նաև նրանից, թե ինչպես և կազմակերպված աշխատանքը խմբելի ներսում:

Մեզանում պատի թերթերի ամենամեծ մասը լույս ե անենում խմբելի նախագահի կամ 1-2 անդամի զեկավարությամբ, իսկ խմբելի անդամների մեծամասնությունը չի մասնակցում թերթի աշխատանքներին: Այս հանդամանքն ապաբուցում է այն, վոր հենց խմբելի

ներսում վառ և կտպմակերպված աշխատանքը, բացակայում և աշխատանքի նմկնեկտիվ սկզբունքը և այլն:

Ստորին մամուլի վերակառուցումը պահանջում է նախ և առաջ վերակառուցել խմբելի լավ հիմքերի վրա դնել աշխատանքը խմբելի ներսում:

Խմբելի վերջնորությունը հետո, նա իր անդամների մեջ կատարում և աշխատանքի բաժանում: Խմբելի յուրաքանչյուր անդամ դառնուում է գործարանի կամ կոլտնաեռության աշխատանքի վորելի բնադավառի կազմակերպիչ (արտադրականն տեսեասկան կազմակերպիչ, ոսցմբան ու հարվածայնության կազմակերպիչ, գործարքի կիրառման, բանվորական կենցաղի բարելավման և այլ աշխատանքի կազմակերպիչներ):

Այսպիսով յուրաքանչյուր կազմակերպիչ պատասխանատու յե խմբելի առաջ, վոր իրեն հանձնարարված բնադավառի աշխատանքը պատի թերթերում բավարար չափով լուսաբանվի:

Կազմակերպիչները կապվելով ցեխերի ավագների, բրիգանձների, մամուլի հարվածային բրիգանձների և հոկիչ պոստերի հետ, նրանց միջոցով մատակարարում են պատի թերթին անհրաժեշտ և արժեքավոր նյութեր:

Այսպիսով խմբելի ներսում հնարավոր և ստեղծել կոլեկտիվ աշխատանք, թերթը լույս ընծայել ժամանակին և լավացնել նրա բովանդակությունը:

ԽՄԲԿՈԼԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մեզանում պատի թերթերի խմբելուները բացի թերթը լույս ընծայելուց, զբեթե մասսայական աշխատանքով չեն զբաղվում, մինչդեռ մեր բայլչեմիկեյան մամուլի ամենահմանական խնդիրներից մեկն ել այն և, վոր նա

(բացի թերթի միջոցով) անժիշտպես կենդանի ձեզերդ կապվի բանլորական ու կոլտնտեսական մասսաների հետ, նրանց անհրաժեշտ ցուցմունքներ, խորհուրդներ և ղեկավարություն ցույց տա:

Մեր խմբկոլները, վորոնք աշխատում են անմիջառ պես արտադրության մեջ, ապա ավելի մեծ հնարավորություններ ունեն ծավալելու կենդանի—մասսայական աշխատանքը բանվորների և կոլտնտեսականների մեջ:

Վորոնք են մասսայական աշխատանքի ձեզերը:

Զանաղան կամպանիաների անցկացումը (մանավանդ, յերբ այդ կամպանիայի խնդիրներն առաջադրում ե կենտրոնական կամ շրջանային մամուլը), ստուգատեսների կամ մասսայական հետազոտությունների կազմակերպումը, ընթերցողների և թղթակիցների կոնֆերանսների հրավիրումը և մասսայական աշխատանքի նման մի շարք ժեզեր:

Ենթաղրենք՝ անց և կացվում արտադրության ուղղունալիղացիայի կամ դյուզատնտեսական մի վորևե կամպանիա: Խմբկոլը չպիտի սպասոի, թե թղթակիցներն ի՞նչ պիտի դրեն այն կամպանիաների մասին. նա պիտի չինի կազմակերպչի դերում: Պետք ե նախորդ հրավիրի ցեխների ավագների կամ վարչետների խորհրդակցություն, թղթակիցների ժողովներ, կոլտնտեսություններում՝ բրիդադիրների և փորձված ու ակտիվ կոլտնտեսականների ժողովներ: Այդ ժողովներում նա քննության պիտի առնի կամպանիայի հարցերը, լավ պատկերացում կազմի դրանց մասին և թղթակիցներին տա համապատասխան առաջադրություններ: Նա կենդանի մեջով պիտի կազմակերպի սոցմրցումն ու հարվածայնությունը կառաջին հերթին արտադրության մեջ աշխատանք է դիմու

էլեցների, մամուլի հարվածային բրիդադմերի և հակիչ պաստերի միջև) բանվորների և կոլտնտեսականների միջև, կամպանիան հաջող անցկացնելու համար:

Մասսայական աշխատանքի այդպիսի ձեզեր շտական և մեր խմբկոլները պետք ե ոգտագործեն այդ ձեռքը, մասսայական աշխատանքի ուժեղացման համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՆԵՐ

Պատի թերթերին կից նվաճումների բյուրոները չափաղանց մեծ անելիքներ ունեն: Նրանց նպատակն ե նախ հետեւյել, վոր թերթում տպլած բոլոր թղթակցություններն ու առաջարկություններն իրենց նպատակին հասնեն և չմնան անհետեվանք: Մի խոսքով թերթում արծարծված այս կամ այն խնդիրը մինչեւ վերջը հասցնել: Իսկ դա չափաղանց խոչըր նշանակություն ունի ինքնաքննադատության և բանդուղմթղթակցական շարժման ծավալման համար:

Նվաճումների բյուրոն շտամքով հաշվի պիտի առնի նաև այն բոլոր նվաճումները, վոր ձեռք և թերթեր խմբկոլը: Այդ գործում հատուկ ուշաղրություն պիտի դարձնել հատկապես թղթակցությունների հետեվանքների հաշվառման վրա, վորովհետեւ դա նվաճումների բյուրոյի հիմնական աշխատանքն ե համարվում:

Նվաճումների բոլորն կազմակերպում ե ինքը խըմբակալը: Նրա մեջ մտնում են ԲԳՏ-ի, գյուղխորհրդի, կոմբինատի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նվաճումների բյուրոյի նախագահը պիտի պնդի թմբկոլի անդամներից մեկը:

ԽՄԲԿՈԼԸ ՊԻՏԻ ԴԱՌՆԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՄՈՒԼԻ ԿՈԼԵԿՑԻՎ ԹՂԹԱԿԻՑԸ

«Սարդին քերքերը՝ բացի արտադրական պլանի աշխատանքային կարգապահաւթյան և սոցմրժման համար մղվազ պայքարում իրենց կատարած դերից, պես և դառնան կենտրոնական, յերկրային, մարզային և շրջանային քերքերի կոլեկցիվ, ԹղթԱԿԻՑՅԵՐԸ»: (Համ. Կ. (բ) է էլետիոնի ս. թ. ապրիլի 16-ի վորոշումից):

Այդ նշանակում ե, վոր խմբկոլները պիտի դառնան ժեր կենտրոնական մամուլի հենարանը: Նրանք ճիշտ ժամանակին պիտի աշազանգեն կենտրոնական մամուլն չեր պահներում առաջացած ճեղքվածքների, նրանց պատճառների և ընդհանրապես կուսակցության գլխավոր գծի ակտավագումների մասին: Այստեղից պիտի յեղակացնել, վոր խմբկոլները պիտի դառնան վոչ միայն թերթ հրատարակող մարզիներ, այլ կենտրոնական մասունի աշխն ու ականջը, նրա մասսայական կոնտրոլ ակում կատարվող և կատարվելիք աշխատանքների, ոնցկացվող քաղաքական, տնտեսական, հասարակական համպանիսների նկատմամբ:

Խմբկոլները պետք ե ամփոփեն և կենտրոնական մասուլն հաղորդեն բոլոր կամպանիաների կոնկրետ արգյունքները: Խմբկոլները կենտրոնական մամուլին պիտի հաղորդեն վոչ միայն պլաններում առաջացած ճեղքածների, թերությունների և ցավոտ կողմերի մասին, այլև սոցիալատական շինարարության ասպարիզում ձեռք բերված նվաճումները, կատարված աշխատանքի դրական փորձը և այլն:

ԱՆՇԵԼՈՐԵՆ ԿԻՐԱՌԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԻԾԸ

Հաճախ մեր պատի թերթեսում բաց են թողնվում քաղաքական կոպիտ սխալներ: Որինակ. Վաղպատի ըրջանի թուրքանլու դյուլի պատի թերթը մեկնարաներով և ՍՍՀՄ Խորհուրդների 6-րդ համագումարի վերոշումները դրում ե:

«Այն չքավոր ու միջակ գյուղացին, վոր կոլտնտեսություն չի մտնում, նու կոլտնտեսության քշնամին և պայքարում ե կոլտնտեսության դեմ»:

Դուքս ե գալիս, վոր յեթե կոլտնտեսությունից գուրս մնացած չքավոր և միջակ գյուղացին կոլտնտեսության թշնամին և, ապա մենք պետք ե պայքարենք նրանց դեմ:

Ինչ խոսք, վոր դա կուսակցության գլխավոր գծի խայտառակ աղավաղումն և և վոչ մի կազ չունի ԽՍՀՄ Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումների հետ: Այդ հանդամանքն առիթ ե տալիս դասակարգային թըշնամու և աջ ու ձախ ողորտաւնիստներին՝ ողտակելով մեր սխալներից, պայքարել կոլտնտեսական շնարարության դեմ: Այդ գեղագում պատի թերթն իր այլք գիրքավորումով վոչ միայն չի ոգնում կոլտնտշարժման ծավալմանը, այլև արգելակներ և ստեղծում նրա առաջ, որում ե կոլտնտեսականների և մենատնտեսատերերի փոխհարաբերությունը:

Նման սխալներ կան բազմաթիվ գործարանների և կոլտնտեսությունների պատի թերթերում:

ՊԱՏՔԱՐ ԱԶ ՅԵՎ «ԶԱԽ» ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Աջ ու «ձախ» ոպորտունիստներն աշխատում են պատահի թերթերն ոպտագործել իրենց նպատակների համար, զետեղելով այդ թերթերում իրենց ոպորտունիստական հոդվածները:

Մյուս կողմից պատի թերթերի խմբկուներում աշխատող ընկերներից մի մասը քաղաքական թույլ պատրաստականություն ունենալու հետեւ վարչով, լրագիրացնում կուսակցության վարած քաղաքականությունը:

Վերջապես այն, վոր կենտրոնական մամուլը, կուսակցական և պրօֆմիութենական կազմակերպությունները պատշաճ ուշագրություն չեն նվիրում ստորին արտադրական մամուլին:

Ահա այն հմտնական պատճառները, վորոնց հետեւ վարչով մեր պատի թերթերից շատերը չեն կարողանում քաղաքական ճիշտ դիրքավորում տալ այս կամ այն ինդիրին և աղավաղում են կուսակցության գիծը:

Ստորին մամուլի հջերից քաղաքական սիսակները վերացնելու և այդ մամուլը կուսակցության դժի կիրառման լավագույն զենքը գործնելու համար, նախ և առաջ պետք է ապահովի երանց աշխատանքների նկատմամբ կուսակցական սիստեմատիկ դեկալարությունը:

Դրա համար տեղական կուսակցական կազմակերպությունները պետք է անհապաղ կիրառեն ՀԿ (բ) Կենտկոմի հետեւյալ վորոշումը:

«Անհրաժեշտ համարել բոլոր չքննուներին և արդյունաբերական խոշոր ձեռնարկություններին (Ալլահ վերդի, Տեքստիլ, Քիմչին, Զորագես, Ղափան, Ան-

Դեմքա, Արթիկ-Տուֆ), խորհրդային ու կոլեկտիվ աշխատավորություններին կից կազմակերպել մամուլի սեկուրիտետը՝ բաղկացած աղիտամսայական բժնի վարիչից, թերթի խմբագրից կամ խմբկուլի նախագահից, ԲԳՏ-ի, պատախաղության և շրջդործկոմի ներկայացուցիչներից»:

Հենց այլ մամուլի սեկուրները պետք է կուսակցական սիստեմատիկ զեկավարություն ցույց տան, ինչպես վողջ բանդուլթղթակցական շարժման, նույնպես և ըստորին մամուլի աշխատանքներին:

Մամուլի սեկուրները և տեղական կուսակցական կազմակերպությունները պետք է հատուկ քննության առնեն պատի թերթերի խմբկուների կազմը, գործնական միջոցների պիտի դիմեն նրանց վորակավորելու և կուսակցության առաջադրած խնդիրներին ծանոթ պահելու համար:

Դրա հետ միասին հատուկ ուշագրություն պիտի դարձնել, խմբկուները լավագույն աշխատանքներով աղաւնովելու համար:

Բավկական չեն միայն ստորին մամուլի մասին տեսլություններ տեղավորել (այն ել շատ քիչ), կենտրոնական թերթերում։ Դրա հետ միասին պիտի ցույց տալ նաև կոնկրետ և գործնական սպնություն (հրավիրել խորհրդակցություններ, տալ նրանց անհրաժեշտ հարցերի բացարձություն, ծանոթ պահել նրանց կուսակցության առաջադրած խնդիրների հետ և այլն):

Այսպիսով մենք կկարողանանք ստորին մամուլի ավելի մարտունակ դարձնել վորպես կուսակցության գլխավոր դժի լավագույն կիրառողի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանգյուղքակիցների աշխատանքը վերակառացման շրջանում	6
Անհատականից դեպի կոլեկտիվ աշխատանք	7
Ի՞նչպես կազմակերպել մամուլի հարկածային բրիգադ	10
Պետք է ուայքարել ձեվական բրիգադների դեմ	11
Բրիգադի աշխատանքի ձեփերն ու բովանդակությունը	12
Ի՞նչպես վերամշակել և ձեվակերպել արշավի նյութերը	16
Առնելիքն ձեռնարկումներ կատարել նեղվածքների վերացման համար	18
Ցույց տալ կոնկրետ և ուղերատիվ դեկավարություն	19
Կազմակերպիչների անելիքը	21
Հարվածայինների հավաքները և նրանց խնդիրները	24
Հնիիչ պաստերը	26
Ի՞նչպես կազմակերպել հաշվառման գործը	27
Հարցարերք՝ հարվածային բդրակցի հաշվառման համար	28
Հարցարերք՝ հարվածային բրիգադի կատարած սովորականից հաշվառման համար	29
Պատի քերթերը դարձնել մեր պլանների կատարման լավագույն լծակներ	30
Խմբկուի բնարարության նոր ձեվը	31
Աշխատանքի բաժանումը խմբկուի ներառմ	32
Խմբերու մասսաւանդ աշխատանքը	33
Կազմակերպել նվաճումների բյուրոներ	35
Խմբկուը տիտի դասնա կենտրոնական մամուլի կողեկտիվ բդրակից	36
Անհեղորեն կիրառել կուսակցության գլուխությունը	37
Պայքարել աջ և «ձախ» բերումների դեմ	38

«Ազգային գրադարան



NL0142740

15795

ԳԻՒԾ 20 ԿՈՊ. (1^{1/4} մ.)



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

О РЕКОНСТРУКЦИИ РАБСЕЛЬКО-
РОВСКОГО ДВИЖЕНИЯ

Госиздат ССР Армении
Эривань—1981